



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



www.usaid.gov/armenia | www.urbanfoundation.am | www.cwp.am | www.elrc.ysu.am

ՈՒՌԳՄԱՆ ԶՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՃԱՆԻ ՏՐԿՈՂ ՀԱՐՅԵՐ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ



**ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ**



**PARTICIPATORY
UTILIZATION AND RESOURCE
EFFICIENCY OF WATER
(PURE WATER) PROJECT**



#purewaterarat

1. Ինչ օրենսդրությամբ են կարգավորվում ոռոգման ջրի մատակարարման հետ կապված հարաբերությունները ՀՀ-ում:

Հայաստանի Հանրապետությունում ոռոգման ջրի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «ՀՀ ջրային օրենսգրքով», «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

2. Ո՞րքան է կազմում ոռոգման ջրի սակագինը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործողից գանձվող ոռոգման ջրի 1 մ³ սակագինը ՀՀ-ում կազմում է 11 դրամ, անկախ ինքնարժեքից:

3. Ինչպե՞ս պետք է վճարել մատակարարված ոռոգման ջրի դիմաց:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր ջրօգտագործող պարտավոր է մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարումները կատարել միայն բանկային կամ փոստային վճարումների ծառայության միջոցով:

4. Ե՞րբ է ջրօգտագործողը պարտավոր վճարել մատակարարված ոռոգման ջրի դիմաց:

«Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածի «բ» կետի համաձայն մի շարք այլ պարտավորությունների թվում, ջրօգտագործողը պարտավոր է.

- յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարումը կատարել մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 15-ը:

5. Ինչ իրավունքներ ունի ջրօգտագործողը:

Ջրօգտագործողն իրավունք ունի.

- օրենքով և պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով ստանալու ոռոգման ջուր,
- օրենքով սահմանված կարգով հիմնադրելու ջրօգտագործողների ընկերություն, անդամակցելու ստեղծված Ընկերությանը,
- ծանոթանալու ընկերության կանոնադրությանը, ներքին կանոնակարգերին, վեճեր լուծող հանձնաժողովի կանոնակարգին, վերստուգող հանձնաժողովի լիազորություններին և գործունեության կանոնակարգին, մասնակցելու ընկերության վեճեր լուծող հանձնաժողովի նիստերին:
- ջրաչափական դիտակետերում ստուգիչ չափումների անհրաժեշտության դեպքում մասնակցելու այդ չափմանը,
- սահմանված կարգով ջրամատակարարից պահանջելու չտրված ջուրը լրացնել հաջորդ 3 օրերի ընթացքում,
- պահանջել ջրաչափություն իր հողակտորի գլխամասում՝ ջրաչափական սարքավորումների միջոցով, որի մասին անհրաժեշտ է ջրումից առնվազն 2 օր առաջ գրավոր դիմել ընկերությանը,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջել ընկերության կողմից ոչ բնականոն ջրամատակարարման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում:

6. Կարո՞ղ է ջրօգտագործողը հայտ ներկայացնել նախատեսվածից ավելի ջուր ստանալու համար:

«Ն օրենսդրության համաձայն՝ նախատեսվածից ավելի ջուր մատակարարելու համար ջրօգտագործողի (բաժանորդի) ներկայացրած հայտը կարող է բավարարվել միայն ջրամատակարարի հնարավորությունների սահմաններում, ինչի մասին ներկայացված հայտի բավարարման կամ մերժման մասին ջրօգտագործողը տեղեկացվում է՝ հայտը ջրամատակարարից ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում:

7. Ո՞րն է համարվում ոռոգման ջրի ապօրինի մատակարարում և օգտագործում:

Ոռոգման ջրի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու ոռոգման ջրի մատակարարման կանոնների օրինակելի ձևը սահմանելու մասին «Ն կառավարության որոշման համաձայն ոռոգման ջրի ապօրինի մատակարարում և օգտագործում է համարվում՝

- մատակարարումը առանց պայմանագրի,
- մատակարարումը և օգտագործումը առանց չափիչ-հաշվառող սարքի կամ ջրաչափական այլ մեթոդների կիրառման տեխնիկական պայմանների խախտումներով (եթե պայմանագրով այլ պայմաններ նախատեսված չեն),
- ինքնակամ ջրամատակարարումը և ջրօգտագործումը (առանց հայտի կամ հայտի խախտմամբ):

8. Երբ կարող է ջրամատակարարը դադարեցնել ջրօգտագործողի ջրամատակարարումը:

Ոռոգման ջրի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու, ոռոգման ջրի մատակարարման կանոնների օրինակելի ձևը սահմանելու «Ն Կառավարության որոշմամբ սահմանված կարգով ջրամատակարարին իրավունք է վերապահվում դադարեցնելու ջրօգտագործողի ջրամատակարարումը՝ սահմանված կարգով 2 օր առաջ դրա մասին նրան գրավոր նախազգուշացնելուց հետո, եթե նա.

- խախտել է կանոնների 17-րդ կետը (ջրօգտագործողը տվյալ ամսվա մատակարարված ջրի դիմաց վճարման ենթակա գումարը պարտավոր է փոխանցել ջրամատակարարի բանկային հաշվին՝ վճարման փաստաթղթերը ստացվելուց հետո 10 բանկային օրվա ընթացքում, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ) և 20-րդ կետը (ջրօգտագործողի կողմից չափիչ-հաշվառող սարքերի ցուցմունքների խախտման, չափիչ-հաշվառող սարքերի կապարանքները վնասվելու և այլ միտումնավոր խախտումների դեպքում),
- խախտել է պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող պարտքերի մարման ժամանակացույցը:

Ջրօգտագործողի ջրամատակարարումը կարող է չդադարեցվել նրա կողմից ջրամատակարարի համար ընդունելի վճարման երաշխիքներ ներկայացվելու և պարտքերի մարման նոր ժամանակացույց կազմելու դեպքերում:

Ջրօգտագործողի (բաժանորդի) ջրամատակարարումը վերականգնվում է պարտքերի վճարումը հաստատող փաստաթուղթը ջրամատակարարին ներկայացվելուց հետո՝ մինչև 3 օրվա ընթացքում:

Եթե ջրամատակարարման սահմանափակումը և (կամ) դադարեցումը կապված է ֆորս-մաժորային դեպքերի, ինչպես նաև ջրաղբյուրներում ու ոռոգման համակարգերում վթարների կանխման կամ դրանց վերացման անհետաձգելի տեխնիկական միջոցառումների իրականացման հետ, ապա այն կատարվում է առանց նախազգուշացման: Ջրամատակարարման սահմանափակումների պատճառների մասին ջրամատակարարն անմիջապես տեղեկացնում է ջրօգտագործողին (բաժանորդին):

9. Ինչպիսի վճարներ են գանձվում ջրօգտագործողների ընկերության անդամներից:

«Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ Ընկերության կանոնադրությամբ սահմանվում են անդամներից գանձվող վճարների հետևյալ տեսակները.

- մատակարարված ոռոգման ջրի վճարը,
- ընկերության կողմից շահագործվող ոռոգման համակարգի շահագործման, վերանորոգման և պահպանման ծախսերը,
- մուտքի վճար և անդամավճար:

Ընկերության ժողովի որոշմամբ կարող են սահմանվել Ընկերության կողմից գանձվող վճարների այլ տեսակներ: Այլ նպատակներով իրականացվող գանձումներ կարող են նախատեսվել նաև Ընկերության կանոնադրությամբ:

10. Ինչպես է դադարեցվում ՋՕԸ-ին անդամակցությունը:

«Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝

Ընկերության անդամը կարող է վարչական խորհրդի որոշմամբ հեռացվել Ընկերությունից, եթե մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ՝

- խախտել է Ընկերության կանոնադրության և (կամ) ոռոգման համակարգի կառավարման և ջրօգտագործման ներքին կանոնների պահանջները.
- չի կատարել մատակարարված ոռոգման ջրի վճարը պատշաճ ձևով կամ ջրի մատակարարման պայմանագրով սահմանված ժամկետում.
- Ընկերության կողմից գանձվող այլ վճարները կատարելուց հրաժարվել է կամ ուշացրել է դրա կատարումը.
- հրաժարվել է վերականգնել Ընկերությանն իր մեղքով հասցված վնասները:

Ընկերության կանոնադրությամբ կարող են նախատեսվել անդամությունից հեռացման այլ հիմքեր:



Սույն հանրային տեղեկատվական նյութը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Իջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով, «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի շրջանակում: Նյութի բովանդակությունը միմիայն հեղինակներին է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: